

## **Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը գրադարանավարի տոնի առթիվ**

Հարգելի գրադարանավարներ

Գրքի պաշտամունքը մեզանում գալիս է դարերի խորքից: Հայ մարդը ոչ միայն գիրք է արարել, այլ նաև ամենադժվարին ժամանակներում հոգացել և կյանքի գնով փրկել, սերունդներին պահ տվել հայ մտքի գանձարան հանդիսացող ստեղծագործությունները: Այս ավանդներն այսօր նվիրվածությամբ շարունակում եք դուք:

Ձերմոտեն շնորհավորում եմ ձեզ գրադարանավարի տոնի առթիվ, մաղթում հաջողություն, բարեկեցություն, ընտանեկան ու անձնական երջանկություն:

Հարգանքներով՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան